ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թ. սեպտեմբերի 20-ից սեպտեմբերի 23-ը

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սերգո Աթանեսյանի ՌԴ Կրասնոյարսկ գործուղման վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Սերգո Աթանեսյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

2022 թ. սեպտեմբերի 21-ից 22-ը Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկ քաղաքում «Ռուսաստանի անտառներ» ֆորումին մասնակցելու համար

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ռուսաստանի Դաշնության բնական պաշարների և էկոլոգիայի նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝ 2022 թ. սեպտեմբերի 21-ից 22-ը Կրասնոյարսկում կայանալիք «Ռուսաստանի անտառներ» ֆորումին:

Հանդիպումների ընթացքում քննարկել է անտառային ոլորտում՝ ըստ ձեռքբերված նախնական պայմանավորվածությունների, փոխհամագործակցության ծրագրային ուղղությունների իրագործման ընթացքներն ու հետագա քայլերը, տվյալ երկրի փորձի փոխանակումը և աշխատակիցների վերապատրաստումը:

Իրականացվել են նաև հանդիպում-քննարկումներ անտառային ոլորտի պաշտոնյաների և համապատասխան ներկայացուցիչների հետ:

Համաժողովի շրջանակներում ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի, ՌԴ կառավարության, մասնագիտացված գործադիր իշխանությունների, գործարար և

գիտական համայնքի, կրթական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել քննարկումներ անտառային համալիրի զարգացման հարցի վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցել են նաև միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներ:

Վերոնշյալ միջոցառումը հնարավորություն ընձեռեց ներկայացնելու մեր երկրում առկա անտառվերականգնման և անտառպահպանության խնդիրները արտերկրում, խթանելու օտարերկրյա պետությունների հետ համագործակցությունը, ինչպես նաև սերտացնելու համագործակցությունը Ռուսաստանի գործընկեր կազմակերպությունների հետ, ձեռք բերելու նոր կապեր և պայմանավորվածություններ, մշակելու նոր համատեղ ծրագրեր:

Ֆորումի գործնական մասը ներառում է Ռուսաստանի անտառահատումների առաջնությունը «Լեսորուբ-2022», ինչպես նաև այցելություն «Կրասնոյարսկի սյուներ» ազգային պարկ:

Նշված ֆորումը ժամանակացույցով կապված է «Անտառային աշխատողների օր» տոնի հետ:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպումների ընթացքում քննարկել եմ հետևյալ հարցերը.

- «Անտառների ներդրումը ժամանակակից կլիմայական օրակարգում: Անտառային կլիմայական նախագծեր: Կլիմայական նախագծերի նորմերը, պայմանները, իրականացման հեռանկարները և արդյունքները»,
- «Անտառամշակման արդյունաբերության զարգացման հեռանկարներ: Նոր իրողություններ և նոր հնարավորություններ»,

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Աշխատանքային հանդիպում եմ ունեցել բիզնեսի և գիտական հանրության ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները.

Համաժողովի շրջանակներում ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի, ՌԴ կառավարության, մասնագիտացված գործադիր իշխանությունների, գործարար և գիտական համայնքի, կրթական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկել եմ անտառային համալիրի զարգացման հարցը: Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև հրատապ խնդիրների լուծման մոտեցումները՝ կապված, մասնավորապես, կլիմայի փոփոխության հետ: Քննարկմանը մասնակցել են միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներ:

Շրջակա միջավայրի նախարարության
անտառային կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

Սերգո Աթանեսյան

28.09.2022թ.